Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվանդ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու (11 դասաժամ), ֆիզկուլտուրա(12 դասաժամ), անգլերեն (6դասաժամ),մաթեմատիկա (11 դասաժամ),եզդերեն(12 դասաժամ), պատմություն(23 դասաժամ), դասվար(18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի ձևով: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության կողմից մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 18-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 15:00-ին «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ Արմավիրի մարզ համայնք Ֆերիկ, գ.Ֆերիկ, Բարեկամության 2:

Տեղեկությունների համար զանգահարել 094-089-866 հեռախոսահամարով: